ՏԱՃԿԱՀԱՅՐ

Վաղուց ի վեր Պոլսոյ թերթերը չենք ստանում մեզանից անկախ պատճառներով և կանոնաւոր տեղեկութիւն չունենք այնտեղ անցած դարձածի մասին: Դեկտեմբերի 13-ի № 5747 «Արևելքի» մէջ կարդում ենք հետևեալը:

— Յոյն Մելքիդներու պատրիարք Տ. Փիրիլոս մի եպիսկոպոսի և գործավարի ընկերակցութեամբ շաբաթ երեկոյին Պատրիարքարան գալով՝ այցելութիւն տուաւ Ս. Պատրիարքին, որը սիրալիր ընդունելութիւն ցոյց տուաւ նրան: Տ. Փիրիլոս Պատրիարքը փափագ յայտնեց Մայր եկեղեցին տեսնելու և իւր հետևորդների հետ միասին քահանաների առաջնորդութեամբ մտաւ Մայր եկեղեցու միջին տաճարը և գլխաբաց առաջացաւ դէպի բեմը, որտեղ առանձին աղօթեց: Ապա դիտեց եկեղեցու խորանը, պատրիարքական ամբիոնը և հանգուցեալ Ներսէս պատրիարքի դամբարանը, որոնց մասին հիացմունք յայտնեց: Մելքեան էֆէնդին ֆրանսերէն լեզուով բացատրութիւններ տուաւ Տ. Փիրիլոսի հարցերին և ասաց, որ Մայր եկեղեցին վերջերս է նորոգուած և այդ նորոգութեան վրայ ծախսուել է 1700 ոսկի: Տէր Փիրիլոս հաւանելով Մայր եկեղեցւոյ ընդարձակութիւնն ու գեղեցկութիւնը, յիշեց, որ Կահիրէի Մայր եկեղեցու մէջ 4000 հոգուց բաղկացած բազմութեան ներկայութեամբ պատարագ է արած: Տ. Փիրիլոս և իւր հետևորդները մինչևնոյն յարգանքով հեռացան եկեղեցուց և իրենց ցոյց տրուած սիրալիր ընդունելութեան համար շնորհակալութիւն յայտնելով մեկնեցան:

Նոյն համարում կարդում ենք.—

— Ս. Երուսաղէմի միաբաններից Տ. Ներսէս Խապայեան Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսի կարգադրութեամբ նշանակուել է Զէյթունի կաթ. փոխանորդ: Այս մասին Պոլսոյ Ս. Պատրիարքի միջոցաւ եղած միջնորդութեանը Երուսաղէմի Ս. Պատրիարքը հաւանութիւն է տուել և թոյլատրել, որ Ներսէս վարդապետը մեկնի իւր պաշտօնատեղին:

Արմաշի վանահօր փոխանորդ Տ. Թորգոմ վարդապետը Արմաշ հասնելով, սկսել է իւր պաշտօնավարութիւնը և գրագրել ներքին վարչական և եկեղեցական գործերի կարգադրութեամբ։

Իզմիրի առաջնորդ է ընտրուած Եղիշէ եպիսկոպոս Դուրեանը, որը դեկտեմբերի 8-ին մեծ շուքով ընդունուել է տեղական դպրոցական վարչութիւնների կողմից։ Մեսրոպեան վարժարանում սրբազանն ընդունուել է պատշաճաւոր երգեցողութեամբ և թափօրով. դպրոցում ճառ են խօսել տեսուչ պ. Թովմաս Էֆէնդի Բոյեաճեան և աշակերտներից մինը իւր ընկերների կողմից կարդացել է ուղերձ։ Սրբազանը գոհ մնալով, իրեն յատուկ պերճախօսութեամբ ատենաբանութիւն է արել, շեշտելով դաստիարակութեան կարևորութիւնը։ Սրբազանը նոյն ձևով ընդունուել է նաև Հռիփսիմեանց վարժարանում և այցելել նաև Կրթասիրի մանկապարտէզը։

Լրագիրները լուր բերին, որ Ս. Երուսաղէմի վանքում վախճանուել է 1892, 93, 94 և 95 թուին Կարինում Առաջնորդական ծանր պաշտօն վարող և այնտեղից 95-ին Երուսաղէմ ուղարկուած Ղևոնդ եպիսկոպոս Շիշմանեանը։

Հանգուցեալը ծնուած էր Կ. Պոլսում 1843 թուին, վարդապետ էր ձեռնադրուել ս. Խորէն Աշըդեան պատրիարքի ձեռքով, յետոյ մեկնած էր Բիլէճիք, որտեղից 1880 թուին Ս. Էջմիածին էր եկել եպիսկոպոս ձեռնադրուելու։ Հանգուցեալը տեղապահական պաշտօն է վարել Խարբերդում, իսկ վերջն էլ Կարնոյ առաջնորդ էր, որտեղից և ուղարկուած էր աքսոր Երուսաղէմ։

Հանգուցեալը Խաս գիւղի Ներսիսեան վարժարանի աշակերտներից էր, ամուսնացած և մի զաւակ էլ ունեցած։ Նա իւր եղբօր հետ Աֆիոն Գարահիսարի մէջ դպրոց էր բացել, բայց կնոջ մահուանից յետոյ փափագ էր յայտնել կրօնաւոր դառնալու և այդ մտքով գիմել էր ս. Ներսէս Պատրիարքին, որը և ներկայացրել էր նրան Կրօնական ժողովին։ Քննութեամբ պարզելով խնդրատուի կարողութիւնը, Կրօնական ժողովը թէև արժանի էր գտել նրան, սակայն փոքրինչ շիլ լինելու պատճա-

ռով թոյլ չէր տուել նորա ձեռնադրութիւնը: Ներսէս Պատրիարքը նրան ուղարկեց Արմաշ, որտեղ և վարդապետ ձեռնադրուեց:

Կիլիկիոյ Տ. Մկրտիչ Կաթողիկոսի օրով նա քննիչի պաշտօնով Պատրիարքարանի կողմից ուղարկուել էր Կիլիկիա, ուր և առաջնորդ էր ընտրուել Կիբրէնի: Նա առաջնորդութիւն էր արել և Եօղղատում: Հանդուցեալը զգայուն և եռանդոտ մարդ էր, նա աշխատակցում էր Կոմիտասի և տաճկահայոց թերթերին և մեր կրօնական ամսաթերթ Արարատին: Թէև հեռու, բայց նա սրտով միշտ կապուած է մնացել տուրք Էջմիածնի հետ և հնար եղածին չափ աշխատել է օգտակար լինել և Մայր Աթոռի համար: Դեռ մեր յիշողութիւնից չի ջնջուել հանդուցեալի մի սրտաճմլիկ նամակ, որ նա Կարնոյ կոտորածից յետոյ գրել էր ծերունի Հայրապետին: Օ՜, որքան կսկիծ և ցաւ կար այդ տողերի մէջ, որպիսի զգայուն սիրտ էր դրուած այդ անլեզու թղթի մէջ, որ հեկեկանք առաջ բերեց և արցունքով լցրեց բոլոր ընթերցողների աչքերը: Դորանից յետոյ նա երկար չը մնաց Կարինում և ուղարկուեց զգայուն սրտերի աքսորավայր դարձած Ս. Յակոբայ վանքը՝ Երուսաղէմ, ուր և վիճակուած էր նրան կնքել իւր մահկանացուն: Փետրվարի 6-ին Վեհափառ Հայրապետի հրամանով հոգեհանգիստ կատարուեց Ս. Էջմիածնայ տաճարում, որին ներկայ էր ամբողջ միաբանութիւնը և որի ժամանակ դամբանական խօսեց Եղիշէ Ծ. վարդապետ Մուրադեանը, գլխաւորապէս կանգ առնելով հանգուցեալի վերջին առաջնորդութեան վրայ: Հանգիստ ոսկերացդ զգայուն հայը և հարազատ հովիւ Լուսաւորչի հօտի՝ աղօթիր, որ նա խաղաղութիւն պարգևի իւր եկեղեցուն և մխիթարութիւն քո սիրած ժողովրդին:

«Լոյսի» մէջ կարդում ենք.—Տանն Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը ձեռնարկած է Մայրավանքին համար ներքին կանոնագրի մը խմբագրութեան: Ինչ ինչ կարգադրութիւններ ալ ըրած է Ս. Կաթողիկոսը միաբանութեան աջակցութեամբ: Միաբանական ընդհանուր ժողով մը գումարելով Ս. Կաթողիկոսի նախագահութեամբ՝ խորհրդակցութիւններ եղած են և վանքին մատակարարական աշխատութիւնները չորս մասի բաժանելով, քուէարկութեամբ ալ տեսուչներ ընտրած են:

Մատակարարութեան—Տ. Վաղարշակ վարդապետ.

Շինութեան համար—Տ. Հրանտ վարդապետ.

Վարձկալութեան համար—Տ. Ղևոնդ վարդապետ.

Ադարակի համար—Տ. Մկրտիչ վարդապետ։

Այս չորս տեսուչներ համախորհուրդ պիտի գործեն վանական կառավարութեան անունով։

ՊԱՐԱԿԱՀԱՅՊ

Առաջնորդական ընտրութեան խնդիրն ահա մի ամբողջ տարի է, ինչ ձգձգւում է և ահագին վնաս հասցնում թեմին։ Երկու փոխանորդներն էլ, չնայելով ծերունի Հայրապետից ստացած բաղմաթիւ կոնդակներին, երկար ձգձգումից յետոյ և վերջին փոխանորդին պաշտօնազուրկ անելու սպառնալիքով, հաղիւ հարկադրեց, որ յունվարի 2-ին առաջնորդական ընտրութիւն կատարուի. սակայն այստեղ էլ ժամանակ վատնելու և թեմի անտէր կացութեամբ օգտուելու համար նախ կանոնադրութեան ոգու հակառակ պայման է դրուել թեկնածուների վերաբերութեամբ և երկրորդ այնպիսի մի անձի ընտրեցին, որը թեմ ունի, վայելում է իւր ժողովրդի համակրութիւնը և այդ պատճառով էլ չը համաձայնուեց դալ Ամերիկայից Թաւրիզ, մանաւանդ յիշելով իրեն հետ խաղացած խաղերը։

Ասում ենք, որ այդ ընտրութիւնը ժամանակ վատնելու համար էր որոշ մարդկանց կողմից և դրան որպէս ապացոյց ծառայում է այն հանգամանքը, որ թեմական ժողովի և պատգամաւորների հետ ոչ մի կապ չունեցող և ոչ ոքից հաւատարմութիւնք չը ստացած մի ռուսաստանցի արհեստաւոր, վստահացել էր մտնել Վեհափառի մոտ և խնդրել, որ առաջնորդական ընտրութիւնը յետաձգուի մինչև մայիսի վերջը։ «Պատգամաւորները ոչ ոքի չեն ճանաչում մեր հոգևորականներից. յետաձգեցէք ընտրութիւնները մինչև մայիսի վերջը, որպէս զի մարդ գտնենք» ասում էր նա։

Ո՞վ էր նա, ո՞ւմ անունիցն էր խօսում, ո՞ր տեղ և ինչ մարդ պէտք է գտնէր, ի հարկէ այս հարցերը ժամանակին դրուեցան և Վեհափառ Հայրապետը հեռագրով տեղեկագրելով, որ Սաքաջեան Ցոլոէի արքեպիսկոպոսը չի գալու, հրամայեց կատա-